Արձանագրություն N 4

ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1 ծածկագրով էլ.աճուրդի ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համակարգիչների, բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի և անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 18 սեպտեմբերի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամ՝ Է.Հովհաննիսյան

Վ.Ամիրխանյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հանձնաժողովի անդամներ Ն.Խաչատրյանը և Ա.Մեսրոպյանը գտնվում են հերթական արձակուրդում և նիստին չեն մասնակցում:

1. Էլ.աճուրդի ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

1.2 Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<ԳՐԵԳԱՐՏ ՍԻՍՏԵՄՍ>> ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին գրություն է ներկայացրել, ըստ որի՝ իրենց կողմից ներկայացված հայտի գնային առաջարկը սխալ է լրացվել /լրացվել է միավորի արժեքը/ ՝ պատճառաբանելով, որ գնման ընթացակարգերի առաջին անգամ են մասնակցում: Մասնակիցը գրությամբ խնդրել է չդիտարկել իրենց կողմից ներկայացված մասնակցության հայտը:

1.3 Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց՝

1.4 Մերժել <<ԳՐԵԳԱՐՏ ՍԻՍՏԵՄՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել

հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ << Կոմպլենդ >> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

1.5 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը՝

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ին:

<<Գնումների մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ: **Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու 10 աշխատանքային օրվա ընթացքում:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատման մասին

(Գ.Հայրապետյան)

Հաստատել **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/1** ծածկագրով էլ. աճուրդի ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Հայրապետյան

անդամներ՝ _____ Վ.Ամիրխանյան

_____ Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ _____ Ա.Ավետիսյան